

087.1  
L-78



087.1

L-78

Ա.Ա.

ԹԱ  
Պ. Լ. Պ. Ո. Տ. Ի. Ն.

# ՀԱՅԹԱՍԻԿ ՅԵՐԿՐԻ ՎՐԱ

ՈՒՐՎԱԳԾԵՐ

46601

211

Թարգմ. Կ. Ր. Ա. Դ. Ա. Բ. Կ. Ե. Զ.

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1926 թ.

20 JUL 2010

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մենք այսոր հափշտակվում ենք արագաթոիչ այերոպլաններով, վորոնք մի ժամում 400 վերստից ավելի յեն անցնում։ Մեզ հետաքրքրում են արագաշարժավորմոբիլները, վորոնց արագությունը հիմա նույնական չափվում է հարյուրավոր վերստերով, և դա մեզ չեղարմացնում, չեա ապշեցնում, վրովինեակա այդ ամենը ամենասովորական բաներ են, առանց վորոնց չի կարող գոյություն ունենալ այժմյան կյանքը։ Յեկ իրավ, ինչպես մենք կարող ենք յերկակայել այժմյան կյանքն առանց յերկաթուղիների, առանց գնացքների և շոգեշարժների։ Ի՞նչպես մենք կարող ենք յերկակայել մեծ քաղաքն առանց տրամփայների և ավտոմոբիլների։

Մինչդեռ հեռու չեա այն ժամանակը, յերբ մարդը չգիտեր վոչ միայն

№ 349 Դրանեավար № 342 ր. Տիրամ 4000

Պիտիքատի առաջի ն ապարան Վաղարշապատու

ավտոմոբիլը, այլ նույնիսկ մեղ համար այնքան սովորական շոգեկառքի մասին չեր կարող մտածել-յերազել անդամ. Յեվ այդ վոչ թե հեռավոր անցյալումն եր—հնում, վոչ թե մարդկային կյանքի արշալուսին, այլ ընդունը միայն... 100 տարի առաջ:

Վորովիճետե միմիայն 1831 թվին եր, վոր առաջին իսկական շոգեկառքնանցավ չուգունե ուելսերով, և միայն այդ տարում հայտնվեց իրապես առաջին ինքնաշարժ սայլակը:

Իսկ մինչ այդ մարդու տեղափոխության միակ միջոցն եր իր սեփական վոտները և անասունները:

Լծերով իր յեզը կամ ձին իր անձունի սայլակին, գանգաղ շարժվում եյին մեր նախահայրերը վատ ու ցեղսուտ ճանապարհներով և ուրախ եյին, յերբ նրանց հաջողվում եր մի շաբաթվա անընդհատ ու հոգնեցուցիչ ճամպորդությունից հետո կտրել 300 վերստ ճանապարհ. իսկ այսոր նույն ճանա-

պարհը մի լավ ամերիկյան ճեպընթաց հեշտությամբ կանցնի յերկու ժամում, իսկ առաջի պատահած մարդատար ոդանավը, ցանկության դեպքում, կարող եայդ ճամպորդությունն անել մի ժամում:

Ահա ինչ չափերով զարգացել են վերջին դարում տեղափոխության միջոցները. մարդը համառ կերպով և հաստատվես հաղթահարում ե տարածությունը, սակայն այդ հաղթությունը ձրի կերպով չի հաջողվում նրան:

Շատ աշխատանք և շատ ուժ ու յեռանդ ե սպառում մարդն այդ կովի մեջ, սակայն, վերջիվերջո, հաղթող դուրս գալիս նրանից: Հենց մարդու տարածության դեմ վարած այդ համառ ու ծանը կովի մասին ե, վոր մենք խոսելու յենք այս գլքույկի մեջ:

Սակայն մենք կպատմենք միայն նրա մասին, թե ինչպես ե մարդը հաղթահարում ցամաքը.—այստեղ խոսք կինի միմիայն հաղորդակցության ցամաքային միջոցների մասին:

— Բայց այդ հո շատ ձանձրալի կլինի,  
կասես դու, — վորովհետև այդ ամենը  
ծանոթ ե և վաղուց հայտնի, և իսկ  
վոր չարժի ավելորդ անգամ խոսել ու  
զբել այդ մասին: Դե առացեք խնդրեմ,  
ի՞նչ կա հետաքրքրական հենց նույն շո-  
գելառքի մեջ, յերբ այժմ մենք  
տեսնում ենք ողանավերի շուրջաշ-  
խարհի թոփչքին, նրանց հրաշալի, ա-  
մեն տարի ավելացող, արագությանը:

Հենց զրա մեջ եքո մեծ սխալը: Յեվ  
իրավ, ոդանակը սովորականից դուրս  
մի նորություն ե մեզ համար: Իսկա-  
պես, ոդագնացությունը վերջին տա-  
րիներում հրաշքներ ե զործում, սա-  
կայն նույնիսկ արտառահմանում ոդա-  
գնացությունը մատչելի յե միայն առ-  
այժմ ունենորներին - հարուստներին, և  
մենք դեռ շատ կապը նք, մինչև հաս-  
նենք այն որին, յերբ Մասկվայից մեկ-  
նելով մեր ծննդավայր գավառական  
քաղաքը, սառնասիրտ կերպով ու ան-  
տարբեր կնսուենք վոչ թե արդեն մեզ

ձանձրալի գարձած յերկաթուղու գնաց-  
քը, այլ ողանավի ահազին առանձնա-  
ռենյակը:

Ողագնացությունը մեր ապագան ե:  
Իսկ ցամաքային փոխադրական միջոցը  
մեր ներկան ե, թող վոր դա լինի  
մի սովորական, մի ծանոթ միջոց, սա-  
կայն առանց այդ մենք այժմ կառա-  
վարվել անկարող ենք:

Դեռ հարց ե — ծանոթ ենք արդյոք:  
Միթե մեզանից բոլորը գիտեն՝ ինչ-  
պես ե հնարվել առաջին շոգեկառքը,  
և միթե ամենքս կարող ենք բացա-  
տրել՝ ինչպես և ինչու համար ե նա  
շարժվում և իր յետեկցել քաշում, տա-  
նում ե ծանր գնացքը: Յեվ, իհարկե,  
շատ քչերը լսած կլինեն մի.ռելսանի  
յերկաթուղու մասին, մի.անիվանի կառ-  
քերի մասին, պտուտակային տրամվայ-  
ների մասին, շարժվող մայթերի մա-  
սին: Իսկ մինչդեռ այդ ամենը գոյու-  
թյուն ունի արտասահմանում հենց այն  
ցամաքային փոխադրական միջոցների

շարքում, վոր քեզ թվում եւ այնքան  
անհետաքրքիր և հին:

Ապագայում ցամաքային փոխա-  
դրական միջոցների կատարելագործու-  
թյան մեջ սպասվում են ավելի մեծ  
հրաշքներ: Ամերիկայում արդեն լուրջ  
կերպով խոսում են գնացքների և ավ-  
տոմոբիլների մասին, վորոնք թե կառա-  
վարվեն և թե կշարժվեն ռազիոյի միջո-  
ցով, իսկ լոնդոնի մոտերքը փորձեր են  
կատարվում մի գնացքի վրա, վորն անե-  
րևակայելի արագությամբ (1000 վերստ  
ժամում) վոչ թե կդնա, այլ ուղղակի  
կթռչի իր գծի վրայով, չգիպչելով նրան: Միթե դա հետաքրքիր չե, միթե հար-  
կավոր չե խոսել և իմանալ այդ մասին,

Իհարկե, այն, մանավանդ վոր մեր  
ցամաքային փոխադրության հրաշքները  
ծնվել-առաջ են յեկել հարյուր հազա-  
րավոր բանվորների արյունից և քրտըն-  
քից, և ամեն մի գյուղացի ու բան-  
վոր, մանավանդ դուք, պիոներներդ,  
պետք ե իմանաք այդ մասին:

Վորովինետև չե վոր դուք պիտի շի-  
նեք-սարքեք մեր տրանսպորտը (փո-  
խադրական միջոց), և յերք ձեզ կիրա-  
վիրեն այդ աշխատանքին, դուք պետք  
և պատասխանեք.

— Մենք պատրաստ ենք: Մենք գի-  
տենք, թե ինչպես առաջին անգամ  
մարդն սկսեց հաղթահարել տարածու-  
թյունը, մենք գիտենք, թե ինչպես ե  
գործում այսորվա տրանսպորտը, և  
մենք շատ լավ տեսնում ենք, թե  
հետագայում ինչի վրա պետք ե աշ-  
խատենք ապագայում, վորպեսզի առա-  
վել մեծ և փայլուն հաղթանակներ  
տանենք տարածության վրա:

Հենց այդ ամենի մասին կարձա-  
ռուած մենք կխոսենք մեր փոքրիկ գըր-  
քույկում:

Հին ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ «ԱԿՏՈՄՈՒԲԻԼ-  
ՆԵՐԸ».

Շատ հին ժամանակներից, դեռ խո-  
րը անցյալից, մարդիկ յերազում եյին

այն մասին, վոր շինեն այնպիսի սայլ, վոր շարժվեր վոչ թե մարդկային ուժով կամ անառունների ուժով, այլ... ինքն իրան, առանց ուրիշի ոգնության: Յերազում եյին և, սակայն, չեյին կարողանում իրանց յերազն իրագործել: Պատճառն այն եր, վոր նախքան ինքնաշարժ կառքը շինելը հարկավոր եր գտնել այն բանը, վոր կարող լիներ նրան շարժել—հարկավոր եր ունենալ շարժիչը: Իսկ այդ շարժիչը կար:

Յեվ միմիայն XVIII դարում մարդն առաջին անգամ ստիպեց շոգուն աշխատել շոգեմեքենայի մեջ և ստեղծեց այդպիսով առաջին շարժիչը, վոր հնարավոր յեղավ գործադրել փոխադրության համար: Իսկ մինչ այդ մեր հախայրերն ունեյին միմիայն մի ուժ—կենդանիները և մարդու մկանների ուժը:

Յեվ գիտակցելով ինքնաշարժ մեքենա ստեղծելու իրանց տկարությունը, մեր նախահայրերն զբաղվում եյին մի-

միայն նրանով, վոր փորձ եյին անում... իրար խաբել: Այդպես, որինակ, հունական գրող Ելիոդորը պատմում է, վոր նախկին աթենացիք (հույները) Ք. ծ.-ից 1000 տարի առաջ շինեցին մի տարրութինակ կառք: Նա բավական արագ եր շարժվում, սակայն միենույն ժամանակ չեյին յերեսում վոչ կենդանիներ և վոչ ել մարդիկ, վորոնք տանելիս լինեյին այդ տարրութինակ կառքը: Նրա տերերը պարծենում եյին, վոր հնարել են ինքնաշարժ կառք: Իսկապես դա, ինարկե, կեղծիք եր, և գաղտնիքն այստեղ պարզվում եր շատ հեշտ կերպով:

Կառքի մեջ կողմնակի մարդկանց հայացքներից ծածկված, նստած եյին ուժեղ ստրուկներ: Նրանք շարժում եյին բավական բարդ կերպով շինված լծակները, վորոնց միջոցով շարժվում եյին այդ հետաքրքիր սայլի անիմսերը:

Ինչպես տեսնում եք, համարյա 3000 տարի մեղանից առաջ մարդիկ գլուխ եյին կոտրում նրա վրա, թե ինչպես

հաղթահարեն տարածությունը, և հաղթահարեն հենց այնպես, վոր նրանց կառքելարող լիներ շարժվել տեղափոխվել վոչ թե կենդանի արարածների ուժի միջոցով, այլ մի ուրիշ ձեռվ, հենց ինքն իրեն—ինքնաշարժ կերպով:

Յեվ այդ միտքը շարունակ մարդուն հետամտում եր: Անցան դարեր, և ահա XVII դարու կեսին Գերմանիայում կառքի վարպետ Փառազը շինում ե բոլորովին նույնանման մի ինքնաշարժ կառք, ինչպես Քրիստոսից տաս դար առաջ նրա հեռավոր նախահայրերը: Ամբողջ զանազանությունը նրա «ավտոմոբիլի» և հին հունական կառքի մեջ կայանում եր նրա մեջ, վոր նրա ծածկակառքի մեջ աշխատում ելին վարձու ծառայողներ, իսկ հույների մոտ՝ ստրուկներ: Սակայն միտքը միենույնն եր—հույները և գերմանացի Գառազը մտածում ելին միենույն բանի մասին—ինքնաշարժ կառքի մասին:

Յեվ նրանց մեզքը չեր, վոր այդ յերազը չիրականացավ: Կենդանի շարժիչ ուժ նրանք չելին ուզում, իսկ մեզենայական ուժը մինչ այդ չեր հնարված դեռ: Իսկ ինքն իրան վոչ մի բան չի արվում և չի շարժվում:

### ՄԵՐ ՇՈԳԵԿԱՌՔԻ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԸ.

Յեվ ահա հայտնվեց շոգեմեքենան և սկզբում սկսեց գործել գործարաններում և քարածխային հանքերում: Մարդիկ ուրախությամբ աշխատեցին գործի գցել նրան, իսկ վոմանք արդեն սկսեցին մտածել այն մասին, վոր գուցե շոգեմեքենան և կարող կատարել ձիու աշխատանքը և շարժել սայլերը: Միքանիսն ասում ելին, վոր հեռու չե այն ժամանակը, յերբ մի կողով ածուխը կարող ե փոխարինել մի պարկ վարսակին:


Յեվ իրավ, 1803 թվին Ամերիկայում, Ֆիլադելֆիա քաղաքում ամերիկացի եվանու առաջին անդամ հնարեց շոգե-

շարժ սայլը, Այդ անձունի և կոպիտ  
սայլն աննկարագրելի հիացմունք պատ-  
ճառեց քսան հազարանոց ամբոխին,  
վոր յեկել եր հավաքվել նայելու, թե ինչ-  
պես մի կերպքարշ եր դալիս այդ ինքնա-  
շարժ կառքը քաղաքի փողոցներով։

Սակայն ամբոխի վոգեորությունից  
դենը չգնաց այդ գործը։ Ինչպես սո-  
վորաբար լինում ե, հնարողի փողը պա-  
կասեց, վորպեսզի միջոց ունենար նոր  
կառք շինել կամ շինածը լավացնել. կա-  
տարելագործել հարուստ մարդիկ չու-  
զեցին սիրտ անել, ծախսել իրանց փո-  
ղը այդ «հիմար հնարքի» վրա, իսկ  
բանվորները, յեթե նույնիսկ զիտա-  
կցում եյին գյուտի ամբողջ շահավետու-  
թյունը և կարևորությունը, այնուա-  
մենայնիվ բոլոր իրանց ցանկությամբ  
անկարող եյին մի բան անել, վորով-  
հետեւ այն ժամանակներում նրանք շատ  
աղքատ եյին և անոգնական։

Շոգիով սայլեր շարժելու միտքը  
հայտնվեց, իհարկե, վոչ միայն Ա-

մերիկայում։ Յերազում եյին դրա մա-  
սին և Յեվրոպայում, և Եվանսից մի  
տարի հետո, 1804 թվին անգլիացի



Տրեվիտիկը հնարում ե ժամանակակից  
շողեշարժերի նախահորը։  
Մեզ համար այդ նախահայրը՝ մի ինչ-

վոր ծիծաղաշարժ հրեշ եւ ինչ կարժեց նար միմիայն նրա տեսքը իր չորս տարորինակ ատամնավոր անիմներով: Մի առանձին աշխուժով աշխատել ել նա չեր կարող:

Ամենաշատը, վորնա կարող եր անել, դա այն եւ, վոր 620 փութ ծանրություն ունեցող գնացքը կարող եր քաշել ժամը  $\frac{7}{2}$  վերստ արագությամբ, այսինքն, որինակ, մեր՝ մի բեռնած ապրանքավագոնը:

Այս վատուժ նախահոր բախտը նույնական ցավալի յեղափ, ինչպես և Եվանսի շոգեշարժ սայլի բախտը.—Նա մոռացվեց իր հայրենիքում:

Այդպես սկսվեցին իսկական շոգեկառք ստեղծելու առաջին յերկշոտ փորձերը:

### «ՀՅԹԻՌԻ» ԾՆՈՒՆԴԸ

Այդ կատարվեց Անգլիայում 1831 թվին: Յեկա այդ առաջին իսկական շոգեկառքի ստեղծողը յեղափ նշանավոր անգլիացի Գեորգ Ստեֆենսոնը:

Նա բոլորովին ազնվատոհմ ծագում չուներ: Նրա հայրը քարածխի հանուքերում շոգեմեքենայի հնոցավառ ե յեղել, իսկ Գեորգը մանկությունից արդեն վարժ ե յեղել տանելու պրոետարական կյանքի բոլոր ծանրությունները: Նա յեղել ե հովիվ և բատրակ հարուստ գյուղացիների մոտ և հասարակ բանվոր ածխահանքերում: Հենց դրա համար ել, զարմանալի չե, վոր միմիայն իր կյանքի 20-րդ տարում նա սովորել ե մի կերպ գրել իր ազգանունը:

Այդ ծանր կյանքը մարզեց պնդացը նրա կամքը, վորի շնորհիվ նա ապագայում կարողացավ պաշտպանել իր շոգեկառքը ամբաստանություններից ե հարձակումներից և նվիրել աշխարհին այն, վոր մենք այժմ կոչում ենք յերկաթուղի:

Շարունակ պտտվելով շոգեմեքենայի շուրջը Ստեֆենսոնն իր բանվորական հոտառությամբ հասկացավ, թե ինչ-

պես լավ կլիներ շինել և գործի դնել  
մի շոգեսայլ։ Յեվ նա յեռանդուն կեր-  
պով ձեռք զարկեց այդ գործին։ Ուղիղ  
հենց այդ ժամանակներին (1820 թ.)  
սկսեցին խոսել այն մասին, վոր ան  
հրաժեշտ ե ճանապարհով միացնել յեր-  
կու անգլիական քաղաք—Լիվերպուլը  
և Մանչեստրը։ Ստեֆենսոնը գլխի  
ընկավ և առաջարկեց լիվերպուլի վա-  
ճառականներին շինել այդ յերկու քա-  
ղաքների միջև յերկաթե ճանապարհ և  
գործի դնել շոգեկառքեր։

Սկզբում ծաղրի յենթարկեցին այդ  
առաջարկությունը, հետո սկսեցին նե-  
րողամտությամբ լսել և վերջապես 5  
տարի անցնելուց հետո մի խումբ վա-  
ճառականներ այդ միտքն առաջարե-  
ցին անգլիական պարլամենտին։

Թվում եր, թե ով կարող եր առար-  
կել այդ բանին։ Մինչդեռ դանվեցին  
շոգեկառքի թշնամիներ, այն ել ինչպի-  
սի թշնամիներ։ Դուրս յեկավ, վոր  
դրանք խոշոր կապիտալիստներ են,

վորոնց այդ հասարակ բանվորի հնար-  
քը խիստ անդուրեկան եր և քմքերին  
չեկավ։

Բանը նրանումն եր, վոր այդ քա-  
ղաքների միջև վաղուց արդեն փոր-  
ված կար ջրանցքը։ Բոլոր նավերը, վո-  
րոնք այդ ջրանցքով եյին անցնում,  
պատկանում եյին մի խումբ ազգեցիկ  
կապիտալիստների, և հենց դրա համար  
ել յուրաքանչյուր մարդ, ով վոր ցան-  
կանում եր մի ծանրոց փոխադրել մի  
քաղաքից մյուսը, պարտական եր կա-  
մա թե ակամա գնալ և գլուխ խոնար-  
հեցնել այդ հարուստների առաջը։  
Պարզ եր, վոր նրանց փոխադրության  
համար մեծ դրամներ եյին առնում և  
խիստ շահում եյին։

Կարելի յե յերևակայել, թե ինչպի-  
սի շփոթ ու հուզմունք ընկավ նրանց  
մեջ, յերբ նրանց հայտնի յեղավ Ստե-  
ֆենսոնի ծրագիրը։ Զե վոր, յեթե այդ  
ճանապարհն անցկացվեր, նրանք կը-  
դրկվեյին յեթե վոչ բոլոր, համենայն

Դեպս իրենց յեկամուտների կեսից:  
Յեվ նրանք վճռեցին կովել չկանգնե-  
լով վոչ մի միջոցի առաջ: Հենց վոր  
յերկրում հայտնի յեղավ Ստեֆենսոնի  
միտքը, թե նա ցանկանում է շինել  
շոգեկառք, կապիտալիստների դրդմամք  
մարդիկ սկսեցին տարածել ամենաան-  
միտ ու հիմար լուրեր:

Նրանք ասում եյին, վոր յերկաթու-  
ղու և շոգեկառքի կառուցումը չար  
դործ ե, մի հանցագործություն ե,  
վորը մտադրվել ե կատարել սատանա-  
յին իր հոգին ծախած բանվոր Ստե-  
ֆենսոնը, վորովհետև շոգեկառքն ահ-  
ռելի մի բան ե: Նրա միից կվոչն-  
չանան թոշունները, կովերը կդադա-  
րեն կաթ տալուց, իսկ այն կայծերից,  
վոր դուրս են գալու շոգեկառքի ծըխ-  
նելույզից, կառաջանան ավերիչ հըր-  
դեհներ:

Սակայն այդ քիչ ե: Ամենազըլ-  
իսավորը գեռ առաջիկայումն ե: Կա-  
նայք այնպես կփախենան, կահաբեկ-

վեն շոգեկառքի տեսքից, վոր կսկսեն  
ծնել սարսափելի, շատ հըշշներ:

Վոչ, շոգեկառքը, դիվային խաղ  
ե: Նրան շինելը վոչ միայն ձեռնտու  
չե, այլ նույնիսկ վտանգավոր ե:

Անա ինչպիսի հեքիաթներ սկսեցին  
շըջել բերնե բերան յերկրի մեջ:

Մութ, տգես մարդիկ հավատում  
եյին այդ ամենին և մի բան ել իրան-  
ցից ելին ավելացնում—ծաղկեցնում,  
և այսպիսով վերջիվերջո ամբողջ Ան-  
գլիայի մեջ տարածվեց դարշելի զըր-  
պարտությունը շոգեկառքի և նրա  
հսարողի մասին:

Յեվ դա հաջողություն ունեցավ,  
պարլամենտը համաձայնվեց այդ բա-  
նին և մերժեց Ստեֆենսոնի առաջար-  
կը:

Բայց համառ բանվոր հնարողը  
չհուսահատվեց, չվհատվեց այդ  
առաջին անհաջողությունից: Նա գի-  
տեր իր կենսական փորձից, վոր վոչ  
մի բան արագ չե կատարվում, և վոր

ամեն ինչի պետք ե հասնել տոկուն և  
ծանր աշխատանքով, նա համոզեց վա-  
ճառականներին հաջորդ տարում նորից  
իր առաջարկը մտցնել պարլամենտ, և  
այս անգամ ինչ-վոր բախտավոր պա-  
տահականությամբ այդ առաջարկն ըն-  
դունվեց, ճիշտ ե, միայն ձայների փոք-  
րաթիվ մեծամասնությամբ:

Մի քիչ անց նշանակվեց մրցու-  
թյուն լավագույն տիպի շոգեկառքերի  
ընտրության համար, և այդ մրցու-  
թյան մեջ ամենալավ շոգեկառքը դուրս  
յեկավ Ստեֆենսոնի շոգեկառքը, վո-  
րը նա անվանեց «ռակետա»:

Այդպես. լույս աշխարհ հայտնվեց  
տարածության առաջին հաղթահա-  
րողը՝ «յերկաթե ձին», ինչպես ան-  
վանեցին նրան անդիացիները:

Յեվ, ինչպես տեսնում եք, նա ստեղծ-  
վեց բանվորի ձեռքերով:

«Գիշեկան ՀՆԱՐՔ».

Այդ 1831 թ. եր. Յեվ այդ ժամա-  
նակից արագ կերպով սկսվեց յերկա-  
թուղիների աճումն ամբողջ աշխարհում:  
Յեվ արդեն առաջին ամիսները ցույց  
տվին, վոր նրանք չափազանց հար-  
մար են, տալիս են ահագին ոգուտ և  
դրա հետ միասին կովերը շարունակում  
են առաջվա չափ կաթ տալ, և հրեշա-  
վոր եյակներ ծնվում են, առաջվանից  
վոչ ավել:

Սկզբում յերկաթուղիներն սկսեցին  
տարածվել իրանց հայրենիքում, Ան-  
գլիայում: Հետո նրանք անցան Յեվրո-  
պա-Ֆրանսիա և Գերմանիա, և միայն  
1837 թ. առաջին անգամ հայտնվեցին  
Ռուսաստանում:

Այստեղ նրանք հանդիպեցին մեծ դի-  
մաղրության մարդկային խավարա-  
մտության և տգիտության կողմից:  
Ինարկե, շոգեկառքը հենց իսկույն մկրր-  
տեցին «գիշեկան հնարք» անունով,  
իսկ «գիշեկան մարդիկ» հաստատում

ելին, վոր «Ռուսական բուքերը չեն հանդուրժիլ ոտքաերկրյա հնարքները և կծածկեն յերկաթուղին ձյունով և թերես նրա գոլորշին կսառեցնեն»:

Սակայն, չնայելով այդ հեքիաթներին, այսուամենայնիվ 1837 թ. կառուցվեց առաջին ոռւսական յերկաթուղին Յարսկոյե (այժմ Դետուկոյե) Սելոյի և Լենինգրադի միջև:

Սակայն յերկար ժամանակ դեռ դրանից հետո ժողովուրդը մի տեղից մյուսը շարժվելը բացատրում եր նրանով, վոր «սատանայական ուժերը փակել են շոգեկաթսայի մեջ, նրան դուրս գալու անցք չկա, և նա ստիպված ակամա գործում եւ իսկ յերբ առաջին շոգեկառքն անցնում եր մի գյուղի մոտով, յերեք պառավ կանայք կատաղությամբ սկսեցին աղաղակել և ծամածովել մի ինչպոր վայրենի պար գալով. այդպիսով ցանկանում եյին հարազատ վայրերից բշել «գեկերին»:

Բայց «գել» չվախեցավ, և հիմա հա-

րյուր-հազարավոր շոգեկառքեր սլանում են յերկաթե ճանապարհներով, խիտ ցանցով վոստայներով ամբողջ յերկրագունդը:

ԻՆՉՊԵՍ Ե ԱՇԽԱՏՈՒՄ ՇՈԳԵԿԱՌՔԸ.


Սակայն յեթե «գել» չե, ապա ովկինչ ե աշխատում շոգեկառքի մեջ, ստիպում ե շարժվել նրա անիմսերին և քարշալ իր յետեից ահազին ծանրության գնացքը. Դա ամենակարող ջրային շոգին ե:

Նրա աշխատանքի մասին շոգեկառքի մեջ մենք մանրամասն չենք խոսելու, վորովհետեւ այն ժամանակ մենք ստիպված կլինենք պատմել՝ ինչպես ե գործում շոգեմեքենան և ուրեմն, մենք շատ յերկար կանգ պետք ե առնենք այդ բանի վրա: Առաջիկայում մենք դեռ հետաքրքիր շատ բան ունենք:

Մանավանդ, վոր յուրաքանչուրը, ով ցանկանում ե մանրամասն ծնոթանալ շոգեմեքենայի աշխատանքների հետ

կարող ե այդ իւմանալ և, Պաժարսկու «Թեյամանի խոռվարկուն» փոքրիկ գըրքույկից:

Բայց և այնպես շոգեկառքի աշխատանքների մասին մի բան հարկավոր ե ասել: Մի նայեցեք ավելի ուշադիր



նկարին. Նրա վրա նկարված ե շոգեկառքի կիսված մասը, վորից պարզ յերեփում ե, թե ինչպես ե աշխատում շոգին, և ինչ ձևով են շարժվում շոգեկառքի անիմերը:

Հսոցում այրվում ե վառելիքը, այսինքն փայտը, ածուխը, նավթը և տորֆը: Տաք ծուխը կամ, ինչպես նրան անվա-

նում են այստեղ, «տաք վառելագազը» խողովակներով (նկարի վրա մեջտեղի սպիտակ հորիզոնական շերտերը) ուղղվում են շոգեկառքի դիմացի մասը և դուրս են գալիս նրա զլխավոր խողովակով վեր, ողի մեջ: Ասկայն նրանք իրենց ճամպորդության ժամանակ մեծ գործ են կատարում:

Պետք ե ասել, վոր խողովակները, վորոնցով անցնում ե ծուխը, տեղավորված են ջրով լցված մեծ կաթսայի շուրջը: Անցնող ծխի տաքությունից կաթսայի ջուրն արագ կերպով տաքանում ե և սկսում կամաց-կամաց զուրջի դառնալ:

Գոլորշին ունի իր քմահաճույքը. նա նեղվածք ե զգում իրեն կաթսայում, և նա, վորոնելով իր համար յելք խողովակով ուղղվում ե դեպի շոգեմեքենայի աշխատող զլանը: Այստեղ նա հարձակվում ե մխոցի վրա և հրելով նրան, միենույն ժամանակ շարժում ե մխոցին ամրացրած մի շարք յերկաթե

Ճողերը: Իսկ այդ ճողերն իրենց հերթին շարժում են շոգեկառքի անիվները:

Կատարելով իր աշխատանքը գլանի մեջ, շոգու առաջին քանակությունը շոգեկառքի խողովակով դուրս. Ե դալիս, իսկ նրա տեղ աշխատող գլանը կալիս են շոգեկաթսայի մեջ կազմված շոգու նորանոր քանակություններ:

Ահա, լողիանուր գծերով, ինչպես և աշխատում շոգեկառքը: Հենց այդպիսի ձև ուներ Ստեֆենսոնի հնարած շոգեկառքը: Հենց այդ ձեի շոգեկառքեր են, վորոնք ուանում են և հիմա այժմյան յերկաթե ճանապարհների վրայով:

### ԱՄԵՐԻԿԱՆ ԳԵՐ-ՇՈԳԵԿԱՌՔԸ.


— Զի կարող լինել, — հուզված կասես դու. — յերբեք յես չեմ հավատալ, վոր 100 տարվա ընթացքում չի փոխվել շոգեկառքի կազմությունը: Թուլլուժ, հյուծված «հրթիու» և հզոր ամերիկական ճեղլընթաց եքսպրեսուր չեն կարող միատեսակ լինել իրենց կազմվածքով:

Մինչդեռ այդ այդպես եւ վորովհետև ճեղլընթացի և «հրթիու» կառուցվածքի ելությունը (ամենագլխավորը) առաջվա նման մնում է հին մխոցի շոգեմեքենան: Փոփոխված են միմիայն մանրամասնությունները, մոցված են միայն բազմաթիվ, համեմատաբար մանը, բարելավումներ - կատարելագործություններ — և միմիայն: Իսկ ամենազլիավորը մնացել է նույնը:

Սակայն, այնուամենայնիվ, ըստ եյության ժամանակակից շոգեգնացները շատ յետ են թողել իրենց զառամյալ պատ - Ստեֆենսոնի շոգեկառքը: Առնենք թեկուզ նորերս (1922թ.) Նյու-Յորկի յերկաթուղու արհեստանոցներից թողած «գեր-շոգեկառքը», ինչպես անվանում են նրան ամերիկացիները: Նա կարող է քաշել 150 ծանր բեռնավորված ապրանքատար ամերիկական վագոններից կազմված մի գնացք:

Ամբողջ գնացքի կշիռն է 750,000

փութ, իսկ յերկարությունը՝ 2 վերտառ:  
Այդ նոր շողեկառքի մասին կա-



բելի յեր շատ հետաքրքրական բան  
ասել, սակայն այստեղ մենք կասենք

միայն, թե ինչպես ե ջուր խմում այդ  
հրեշը և ինչպես իր ընթացքի ժամա-  
նակ բաժանում, ե թողնում ուզած  
վագոնը:

Յուրաքանչյուր շոգեկառք ընդ-  
հանրապես ջրի պետք շատ ունի: Իսկ  
այդ «գեր-շոգեկառքը», վորը քաշում  
ե այդպիսի անհավատալի ծանրու-  
թյուն,—առավել ևս:

Յեվ ահա, վորպեսզի կայարաննե-  
րում ջուր առնելու համար խիստ յեր-  
կար չկանգնի, նրան ջուր են մա-  
տակարարում գնացքի ընթացքի ժա-  
մանակ:

Դրա համար ճանապարհի վորոշ  
տեղերում ոելսերի միջով սարքում են  
ջրով լցված փորվածք (յերկար տաշտ),  
իսկ շոգեկառքի տակն ամրացնում են  
շարժման ուղղությամբ թեքված մի  
դիմացկուն խողովակ:

Այդպիսով, յերբ գնացքն ամբողջ  
ընթացքով գնում ե այդ փորվածքի  
վրայով, վայր թեքված խողովակը

հասնում ե ջրին և ջուր ե լցնում շու-  
գեկառքի կաթսայի մեջ, չվատնելով  
միկնույն ժամանակ վոչ մի վալրկյան  
կայարանի ջրամբար սյունյակի ա-  
ռաջ կանզնելու վրա (այսինքն կայա-  
րանների այնպիսի սյուների առաջ,  
վորի ոգնությամբ սովորաբար շոգե-  
կառքը ջուր ե առնում):

Նույն ե կատարվում և բաժան-  
վող վագոնների հետ այն կայարան-  
ներում, վորաեղ գնացքը չի կանզնում:

Բեռներով վագոնները, վորոնք  
ֆնալու յեն միջանկյալ կայարաններում,  
կցվում են գնացքի վերջը: Յերբ  
գնացքը մոտենում ե այդ կայարանին,  
մեքենավարը վորոշ տեղում սեղմում  
ե հատուկ լծակը, այդ ազգանշանը  
հաղորդվում ե գնացքի ծայրին, և  
հարկավոր վագոնները վալրկենապես  
բաժանվում են, իրենք իրենց թողնը-  
ված՝ նրանք դեռ միքանի ժամանակ  
շարժվում են ուղևերով, ապա հետո  
դանդաղ մոտենում են և կանգ առ-

նում իրանց կայարանի առաջ: Իսկ  
գնացքը կանգ չառնելով անցնում ե,  
մի բոպե անգամ չդանդաղեցնելով իր  
ընթացքը:

Ահա ինչպես ահագին և հետա-  
քըրքիր ե ամերիկական վերջին շոգե-  
կառքերից մեկը, վորի ամենամեծ արա-  
գությունը հասնում ե յերբեմն 200  
վերսափ մի ժամում:

### ՇՈԳԵԿԱՐՔԸ ՄԵՌՆՈՒՄ Ե.

Թվում ե, թե գրանից ավելի լավ  
բան լինել չի կարող: Ցամաքային արանս-  
պորտից ել ինչ կարող ենք սպասել,  
քան այդ ամերիկական գերգնացքը:

Մինչդեռ այսորվա տեխնիկան  
արդեն իսկ անբավական ե շոգեկառ-  
քից: Յեվ նա վորոնում ե ինչ-վոր մի  
ուրիշ բան, վորը պիտի փոխարինե  
յերկաթե ճանապարհների վրա 100 տա-  
րի աշխատած շոգեգնացքին:

Ինչու համար:

Բանից դուրս ե գալիս, նախ և  
առաջ նրա համար, վոր նա վառելիք  
շատ ե պահանջում: Նա խիստ շատ ե  
լափում փայտ, ածուխ, նավթ, լափում  
ե վոչ ըստ կատարած աշխատանքի:

Առաջները, յերբ վառելիք շատ  
կար, այդ «վորկրամոլության» վրա  
վոչ վոք ուշադրություն չեր դարձը-  
նում: Իսկ այժմ, յերբ մենք ստիպ-  
ված ենք ավելի ու ավելի խորը մտնել  
քարածխային հանքերն ածուխ հանելու  
համար, յերբ քանի գնում ե, նավթա-  
հորերում պակասում ե նավթը, — հիմա  
այդ բանի վրա հարկավոր ե լինում  
մտածել լուրջ կերպով: Վորովհետև  
ամենալավ շոգեկառքն անդամ ոգտա-  
գործում ե վառելիքի միմիայն 8%/  
եներգիան կամ, ավելի պարզ և ավե-  
լի կոպիտ ասած, գործադրելով մի  
մանեթի վառելիք, միմիայն 8 կոպի-  
կի աշխատանք ե կատարում: Իսկ դա  
չափազանց քիչ ե հիմիկվա ժամա-  
նակների համար, յերբ ամեն բանի մեջ

մենք անտեսություն ենք անում:  
Հենց դրա համար ժամանակակից տեխ-  
նիկան սկսում ե այսոր վորոնել մի  
վորեե փոխարինող, վոր կարողանար  
բռնել շոգեկառքի պատվավոր տեղը  
յերկաթուղիների վրա և միևնույն  
ժամանակ այնքան շատակեր չիներ  
և անփույթ ու անհոգ, ինչպես ե  
ծերունի շոգեկառքը:

Ո՞վ ե սակայն այդ ժառանգը:

**ՇՐՋԱՄՈՒՂ ԿԱՌԻՔ (РУРБОВОЗ).**

Վորպեսզի այս հարցին պատաս-  
խանենք, յեկեք պարզենք ահա ինչը —  
ինչու մեզ ձեռնտու չե շոգեկառքը,  
ինչու նա այդչափ շատակեր ե:

Դրա մեջ մեղավոր ե այն շոգե-  
միիչ մեքենան, վոր աշխատում ե  
այսորվա շոգեկառքերի մեջ: Դա նա  
յե, վորուտում ե չափազանց շատ վա-  
ռելիք և դրա փոխարեն կատարում ե  
շատ քիչ աշխատանք:

**Ուրեմն շոգեկառքի ապագա ժա-**

ուանգները չպիտի ունենան մխոցային  
մեքենա:

Հենց այդպես ել կլինի. նրա առա-  
ջին և մոտակա ժառանգը—շրջամուղ  
գնացքն ե:

Նա, ճիշտն ասած, զանազանվում ե  
շոգեկառքից միմիայն նրանով, վոր նրա  
վրա փոխանակ ագահ շոգեմիսիչ մեքե-  
նայի կանգնած ե առավել պակաս  
ագահ շոգու շրջամուղը: Թե դա ինչ  
շարժիչ ուժ ե, մենք այստեղ նմանա-  
պես մանրամասն չպիտի բացատրենք,  
և նրանք, ովքեր հետաքրքրվում են  
այդ հարցով, խորհուրդ կտանք կարդալ  
է. Պաժարսկու «Թեյամանի խոռվար-  
կուն»: Իսկ այստեղ միմիայն կասենք,  
վոր յեթե մխոցային մեքենայի մեջ  
շոգին հրում ե մխոցը, ոդը շարժվելով  
շարժման ե բերում շոգեկառքի անիվ-  
ները, այդ դեպքում շոգու շրջմուղում  
նույն շոգին արդեն ինքն ե շարժում  
մեծ անիվը, ոդն իր հերթին պտույտ ե  
բերում շրջմուղային գնացքի անիվները:

Ահա շրջմուղային գնացքի և շոգե-  
կառքի բոլոր տարբերությունը և նրանց  
կառուցվածքի զանազանությունը:

— Արժե արգյուք այս ամենի հա-  
մար մտածել, —կհարցնես դուք:

Արժե և նույնիսկ շատ արժե:  
Վորովինետև շնորհիվ այդ տարբերու-  
թյան հնար յեղավ հասնել այն բանին,  
վոր շրջմուղային գնացքն ուտում ե  
յերկու անգամ ավելի քիչ վառելիք, քան  
շոգեկառքը: Իսկ սաքիչ տնտեսություն  
չե:

Ներկա ժամանակում շինված են  
միմիայն միքանի շրջմուղային գնացք-  
ներ Գերմանիայում և Անգլիայում: Իսկ  
Ամերիկան ներկայումս միմիայն նոր  
ե շինում իր առաջին շրջմուղային  
գնացքը, վորը և նկարված ե մեր նկա-  
րում (եջ 30):

Յեթե դու ամեն կողմից լավ նա-  
յես նրան, կնկատես, վոր նա կազ-  
մըված ե յերեք առանձին փոքրիկ  
շոգեկառքերից—միջին, վոր շատ նման

ե մեր սովորական շոգեկառքին, և յերկու ծայրերի շատ տարորինակ ձեւ՝ և անհասկանալի նշանակության շոգեկառքերից: Բանից դուրս ե գալիս, վոր մեջտեղի սայլը սովորական շոգուկաթոս յե, վորը դու կգտնես մեր առաջին պատահած շոգեկառքի մեջ: Այստեղ գոյանում ե շոգին, վորը յերկու խողովակների միջով ուղղվում գնում ե գեպի յերկու ծայրի սայլերը: Նրանցից յուրաքանչյուրի մեջ տեղափորված են շոգու շրջմուղներ, վորոնք և, իսկապես ասած, քաշում-տանում են գնացքը: Հենց նրանց մեջ ել դված են մի-մի սառցարաններ:

— Իսկ դա ինչու համար ե, — կը հարցնես դու:

Այդ սառցարանների նպատակն անա ինչումն ե:

Պետք ե ասել, վոր մեր սովորական շոգեկառքը վոչ միայն շատ վառելք ե ուտում, այլև բավական ջուր ել ե խմում: Դրա համար ել դժվար ե

անցկացնել յերկաթուղիներ անջրդի անապատներով և գաշտերով: Հենց միակ դրա համար ե, վոր նրանցում շոգեկառքի համար ջուր չկա, իսկ նա չի կարող աշխատել առանց հաճախակի ջուր առնելու:

Նույնպես անոգնական կլիներ շրջմուղային գնացքն անջրդի դաշտերում, յեթե նա այստեղ ընկներ առանց սառցարանների, բայց նրանցով նա իրեն հիանալի յե զգում, վորովհետև նրանք նրան հնարավորություն են տալիս միշտ կառավարվել նույն քանակի ջրով: Յեկ անա թե ինչ պատճառով: Գոլորշին շոգեկաթսայից ուղղվում ե շոգու ջրանիմների մեջ: Այստեղ նա աշխատում ե, սակայն աշխատանքը վերջացնելով դուրս չի տալիս շոգին, ինչպես այդ անում ե շոգեկառքը, խողովակի միջով, այլ մղում ե սառցարանը: Այստեղ նա սառում ե, դառնում ջուր և հատուկ խողովակով գնում ե յետ շոգեկաթսան, վորպեսզի այնտեղ

գառնա շոգի և նորից ուղղվի դեպի  
Մըմուղները։ Յեվ այդպես ճանապար-  
հորդում ե ջուրը շրջմուղում, ճանա-  
պարհին դառնալով մեկ շոգի, մեկ նո-  
րից ջուր։ Հենց դրա համար ել շըրջ-  
մուղային գնացքը կարող ե շատ յեր-  
կար առանց թարմ ջուր առնելու  
միալ։

---

## ԶԵՐՄԱՔԱՐԾ.

Շոգեկառքի յերկրորդ ժառանգն ե  
յերմաքարշը։ Յեթե շրջմուղային գնաց-  
քի մեջ կա դեռ շոգեկաթսա և շոգի, ու  
չկա միայն շոգու մխոցային մերենա,  
այդ դեպքում յերմաքարշի մեջ չկա  
արդեն վոչ շոգի, վոչ շոգեկաթսա։

Այդ բոլորի փոխարեն այստեղ  
կան ներքին այրեցման շարժիչ և ելեկ-  
տրոմոտորներ։ Յեթե մենք սկսենք  
բացատրել՝ ինչ բան ե ներքին այրեց-  
ման շարժիչը, այն ժամանակ հենց  
այդ բանի մասին պետք կլիներ զբել

սրա նման մի գիրը ևս։ Այստեղ մի-  
միայն կասենք, վոր դա նույն շար-  
ժիչն ե, վորը դրված ե ժամանակա-  
կից սավառնակների և ավտոմաքիլների  
վրա և վորը տաքացվում ե հեղուկային  
վառելանյութով (այսինքն—նավթով,  
բենզինով, կերոսինով, սպիրտով և  
այլն)։

Զերմաքարշի ամբողջ աշխատանքը  
կայանում է ահա ինչում։ Նախ սկսում  
ե աշխատել ներքին այրեցման շարժիչը։  
Նա պտտեցնում է դինամո-մեքենան,  
վորը մշակելով ելեկտրական հոսանք,  
տալիս ե այն հենց այդտեղ գտնված  
ելեկտրո-մոտորներին։ Յեվ միմիայն  
այդ ելեկտրո-մոտորներն են շոգեքար-  
շի անիվսերը պտտեցնողները։

— Սակայն ինչ կարիք կա ստեղ-  
ծել այդպիսի բարդ մեքենա, — կասես  
դու, — յերը կա անհամեմատ առավել  
հասարակ շոգեկառք։

Դու իրավացի կլինեյիր, յեթե  
դուրս չգար, վոր այդ բարդ մեքե-


նան ուտում ե չորս անգամ քիչ վառե-  
լանյութ, քան «հասարակ շոգեկառքը»:

Շոգեքարշեր հիմա շատ քիչ կան,  
սիմիայն միքանի հատ շինվում ե Ան-  
դիայում և յերեք հատ ել շինվում ե  
մեր ոուսական ճանապարհների հա-  
մար,—մեկը Անդիայում, յերկրորդը—  
Գերմանիայում և յերրորդը մեր Լե-  
նինգրադի գործարաններում։ Մասնա-  
գեաներն ասում են, վոր շոգեկառքի ոյտ  
յերկրորդ ժառանգը լայն գործադրու-  
թյուն և զարգացում կգտնի հատկա-  
պես մեր ոուսական յերկաթուղիների  
վրա։

---

### ԵԼԵԿՏՐՈԳՆԱՅՔ.

Շոգեկառքի յերրորդ ժառանգը  
ելեկտրոգնացքն ե։ Դա վոչ այլ ինչ ե,  
յեթե վոչ մեր տրամվայը, ուսկայն իր  
չափերով ավելի մեծ և իր ուժով ա-  
վելի հզոր։ Նրա մեջ չկա վոչ շոգի,  
վոչ շոգեմեքենաներ, վոչ վառելանյութ։  
Իր սնունդը—ելեկտրական հոսանքը—



նա ստանում ե կենտրոնական ելեկտրական կայարանից՝ ճանապարհի ուղղությամբ ձգված ողի միջի թելերից։ Այդ հոսանքն առաջ գնում, անցնում ե ելեկտրոդնացքի ելեկտրական մոտորները, ստիպում ե նրանց աշխատել և պարտեցնել անիվները, իսկ հետո ռելայների միջոցով անցնում ե գետնին։

Բայց ելեկտրագնացքը նույնպես, ինչպես և տրամվայը, միացած է թերթերի հետ։ Առանց նրանց նրանք յերկումն ել մեռած, անկենդան սայլեր են դառնում։ Յեկ ուրեմն յեթե մի վորակե պատճառով դադարի գործել կենտրոնական ելեկտրական կայարանը, կամ վիշանան թելերը, այդ դեպքում բոլոր ճանապարհների վրա գտնված ելեկտրոգնացքները կկանգնեն։

Վորպեսզի ազատվենք այդ անախորժությունից, յերբեմն ելեկտրագնացքի վրա դնում են ելեկտրահավաք գործիք (ակումուլյատոր), այսինքն մի գործիք, վորը կարող ե պահել ելեկ-

տրական եներգիա և հետո պետք յեղած ժամանակ հաղորդել ելեկտրագնացքի մոտորներին։ Բայց մինչեւ վերջին ժամանակներն ելեկտրահավաք գործիքները սովորաբար շատ ծանր ելին լինում և թանգարժեք, և դրա համար ել ելեկտրահավաք գործիքներ ունեցող ելեկտրագնացքներ շատ սակագ ելին գործածվում։

Յեկ միմիայն վերջին յերկու տարվա լնթացքում գերմանական ինժեներներին հաջողվում ե շինել այնպիսի լավ ելեկտրահավաք գործիքները, վոր նրանցից ունեցող ելեկտրագնացքներն այժմ լավ աշխատում են Բերլինի արվարձաններում։

Ահա շոգեկառքի յերեք անմիջական ժամանակները, վորոնք փոխարինելով նրան, կշարունակեն տարածության նվաճման պատվավոր գործը։

Նրանց հետ գուք, պիոներներդեռ ել գործ կունենաք, յերբ փոքր ինչ անց

Աճեռնաբկեք մեր յերկրի տնտեսական  
շինարարությանը:

Ա.Վ.ՏՈՄՈԲԻԼ.

Բայց շոգեկառքն ունի մեկ ուրիշ  
թշնամի յել անսպասելի ու, թվում եր  
թե՝ անվտանգ թշնամի:

Դա ավտոմոբիլն է: Մեզ մոտ, Մի-  
ության մեջ, դա նկատելի չե, վորով-  
հետև ավտոմոբիլային փոխադրությու-  
նը մեղնում թույլ ե զարգացած:  
Բայց արտասահմանում և գլխավորա-  
պես Ամերիկայում ավտոմոբիլն ամե-  
նալուրջ կերպով կռվում է շոգեկառքի  
և առհասարակ յերկաթուղու հետ, և  
հաղթանակը, թվում ե, սկսում ե  
թեքել ավտոմոբիլի կողմը:

Դա զարմանալի յել չե, վորովհե-  
տև ավտոմոբիլների քանակն Ամերի-  
կայում շատ մեծ է: Այստեղ ե, որի-  
նակ, ավտոմոբիլային խոշոր գործա-  
րանատեր չենքի թողով:

Մի 20 տարի առաջ նա իր գոր-  
ծարանը կառուցեց Դիտրոյտ քաղա-  
քում, իսկ ներկայումս նա հնար ե  
գտել իր գործարանի դարպասից յու-  
րաքանչյուր որ բաց թողնել... 10,000  
նոր ավտոմոբիլ:

Մի խոսքով, 1924 թ. կեսին մի-  
միայն Ամերիկայում 16 միլիոն ավտո-  
մոբիլ կար: Ինարկե, նրանք բոլորն ել  
գտնվում են ունենոր դասակարգի ձեռքին,  
սակայն յեթե նրանք համահավասար  
կերպով բաժանված լինելին բոլոր  
բնակչության մեջ, այն ժամանակ ամեն  
մի 5 մարդուն կընկներ մի ավտոմոբիլ:  
Մեզնում մեկ ավտոմոբիլն ընկնում է  
10,000 մարդուն:

Իսկ յեթե մենք վերցնենք Միա-  
ցյալ Նահանգների բոլոր ավտոմոբիլները  
և կանգնեցնելինք մի շարքով, այն ժամա-  
նակ կստացվեր 40,000 վերստ ձգված  
մի ժապավեն, նույն ավտոմոբիլների  
քանակը կբավականանար 66 կարդ  
շարելու լենինգրադից մինչև Մասկով:

Յեկ ահա այդ հսկայական ավտո-  
մոբիլային բանակը և արշավում ե խիտ  
շարքերով մեր զառամյալ «յերկաթու-  
ղու» վրա, և արդեն այս ըոպեյիս կա-  
րելի յե վստահությամբ սպասել, վոր  
մոտ ե և անխուսափելի ավտոմոբիլի  
հաղթանակը շոգեկառքի վրա:

Ավտոմոբիլը կհաղթե միմիայն  
նրանով թեկուզ, վոր շոգեկառքից ե-  
ժան ե, պահանջում ե իր սննդի հա-  
մար առավել քիչ վառելանյութ և կա-  
րող ե անցնել այն տեղերով, ուր ա-  
մեն ժամանակ չի կարող ընկնել շոգե-  
կառքը:

Ավտոմոբիլի այդ հաղթանակը շո-  
գեկառքի վրա նկատելի յե արդեն:  
1921 թ. Ամերիկայում, այսպէս ան-  
փանված, մարդատար «ավտոբուներով»  
(վորոնք, ի գեպ ասած, առաջին ան-  
գամ նորերս հայտնվեցին Մասկվայում) փոխադրել են Շ միլիարդ ճամպորդ և  
106 միլիարդ վերստ են անցել: Մինչ-  
դեռ հենց նույն ժամանակում յերկա-

թուղիները փոխադրել են 1 միլիարդից  
քիչ ավել ճամպորդ ընդհանուր առ-  
մամբ և անցել են մոտ 56 միլիարդ  
վերստ տարածություն:

«ԹՐԹՈՒՐՈՎ» ՍԱՀԱՐԱՅԻ ՄԻԶՈՎ.

Ավտոմոբիլը հաղթանարում ե վոչ  
միայն շոգեկառքը:

Նորերս նա հաղթանակեց նույնիսկ  
անապատի նավին—ուղտին:

Թվում եր, թե ով կարող եր, բա-  
ցի ուղտից, անցնել արեի տապից շի-  
կացած Սահարայի անջուր ավագների  
միջով:

Մինչդեռ նորերս (1921 թ.) միքա-  
նի ֆրանսիացիներ ամենահետաքրքրա-  
կան ճանապարհորդություն կատարե-  
ցին,—նրանք մի առանձին ավտոմոբի-  
լով—«ամեն տեղ շրջող»—կտրեցին Սա-  
հարա անապատը, անցնելով 3200  
վերստ անջուր ավագուտներով 21 որ-  
դա մեջ, մինչդեռ նույն ճանապարհու

ուղտերի կարավանն անցնում է 2—3  
ամսվա մեջ:

Այդ ավտոմոբիլի ամբողջ գաղտ-  
նիքը նրա մեջ է, վոր նա, փոխանակ  
յետևի անիմսերի, ուներ այսպես ան-  
վանված «թրթուր»:

Յերևակայեցեք անընդհատ, ան-  
վերջ ժապավեն, վորի արտաքին կող-  
մից ամրացված են տափակ շերտեր  
կամ փշեր: Այդ ժապավենը ձգված է  
յերկու փոքրիկ գլանակների վրա և  
կարող է նրանց վրա շարժվել այնպես,  
վոր իր մի մասովը միշտ շփվում է  
գետնին: Այդ ժամանակ նրա շերտերը  
քսվում են հողին, և ամբողջ ավտոմո-  
բիլը, ինչպես թրթուր, սողում է գետ-  
նի վրայով:

Նման «թրթուրային ավտոմոբիլ-  
ները» չեն վախենում վոչ տաք ավա-  
զից, վոչ ճահճից, վոչ վոլորապտույտ  
զառիվայրերից, վոչ ձորերից: Նրանք  
կարող են անցնել ամեն տեղով և նույն-  
իսկ տանել իրանց յետևից մեծ բեռ:

Հենց այդ ձեռվ են շինված և սար-  
սափելի տանկաների (զրահավորված  
ավտոմոբիլ) անիմսերը, վորոնք առա-  
ջին անգամ հայտնվեցին կովի դաշ-  
տում անցյալ պատերազմին: Նույն ձե-  
ռվով շինվում են և այն ապրանքատար  
ավտոմոբիլները, այլապես ասած՝  
«տրակտորները», վորոնք ստիպված են  
կամ խիստ մեծ բեռ տանելու շատ վատ  
ճանապարհներով կամ գործ ունենալ  
գյուղատնտեսական ծանր գործիքների  
հետ (գութան, ցաքան և այլն):

Նրանց բոլորի վրա դրված են եր-  
քին այլեցման շարժիչ մեքենա, և դա  
նրանց դարձնում է առանձին ոգտա-  
կար և շոքեկառքից ավելի եժան, վոր,  
ի գեպ ասած, հենց այդ աշխատանքն  
առհասարակ անկարող է կատարել:  
Նրան հարկավոր է անպատճառ լավ  
ուելսային ճանապարհ, հենց դրա հա-  
մար ել նա չի կարող մրցել ավտոմո-  
բիլի և մանավանդ «թրթուրի» հետ,  
վորի համար չկա վոչ մի արգելք, և

Վորը կարող ե իր ժապավենների վրա  
սողալ ամեն տեղ:

### ՄԻԱՌԵԼԸ ՅԵՐԿԱԹՈՒՂԻՒԹԻՒՆ.

Ահա սրանք են այն հիմնական  
հակառակորդները, վորոնք հենց այժմ  
իսկ պատրաստվում են շոգեկառքին  
իր բոնած 100-ամյա տեղից վայր  
գցել:

Յեվդուք, պիոներներ, կապրեք հենց  
այն ժամանակները, յերբ այդ «հեղա-  
փոխությունը» ցամաքային փոխա-  
դրության մեջ ամենաբարձր զարգաց-  
ման հասած կլինի:

Միայն շոգեկառքի ամենաարժա-  
նավոր ժառանգը չե, վոր դուք պետք  
ե ընարեք: Փոխադրության առաջ  
այժմ կանգնած են այլևս մի շարք  
կարևոր հարցեր, վորոնց լուծումը  
նույնպես դուք եք տալու:

Ցամաքային փոխադրության բնա-  
գավառում դուք ապրում եք առան-

ձնապես հետաքրքիր ժամանակներու  
վորոնց նմանը թերևս վերջին հարյուր-  
րամյակում չի լեղել: Մենք հենց նոր  
ասացինք, վոր շոգեկառքը հնանում ե,  
վոր ցամաքային փոխադրության մեջ  
շարժիչ մեքենան արմատապես փոխ-  
վում ե:

Բանից զուրս ե գալիս, վոր նույն  
դրության մեջ ե գտնվում և ճանա-  
պարհը: Նա յել կարծես յենթարկվելու  
յե ցամաքային փոխադրության մեջ  
կատարվող մեծ հեղափոխության ազ-  
գեցությանը:

Սակայն ի՞նչն արդյոք կարելի լե  
այստեղ փոխության յենթարկել:

### ՄԻԹԵ ՈԵԼՄԵՐԸ:

Գտար: Հենց ոելսերով իսկ ան-  
բավական ե այժմյան տեխնիկան: Յեվ  
անբավական ե հենց նրա համար միայն,  
վոր, նրա կարծիքով, նրանք բոլորովին  
ավելորդ են, պետք չեն: Նրանք  
միայն ավելորդ ծախս են լերկրի հա-  
մար, և ահա նրանց դեմ հենց հար-

կավոր ե ամենախիստ, ամենաանողոք  
պատերազմ հայտարարել:

— Սակայն ի՞նչպես, — կզմամանաս  
դու, — ի՞նչքանի վրա պիտի հաստատվի  
գնացքը, յերբ վոչնչացնենք ռելսերը:

Այդ կարևոր հարցի մասին պետք  
ե լուրջ խոսել: Ասա, համոզված ես  
արդյոք դու այն բանի մեջ, վոր գնաց-  
քի համար անհրաժեշտ ե հենց յերկու  
ռելս, վոր նա ամուր հաստատվի և  
շարժվի:

— Իհարկե, համոզված եմ, — կպա-  
տասխանես դու:

Մինչդեռ դու սխալվում ես, վո-  
րովինետես գնացքը շատ լավ կարող ե  
կայուն մնալ, ունենալով իր տակ ընդա-  
մենը միմիայն մի ռելս:

— Վհրտեղից ծնեց հեղինակի  
գլխում այդպիսի ոտարութի միտք, —  
յերեկ կծիծաղեն շատերը մեր ընթեր-  
ցողներից:

Սակայն մենք կարող ենք ցույց  
տալ մի խաղալիք, վորը, հավանական

ե, շուտով մեր յերկաթուղուն կսահպի  
հրաժարվել իր մեկ ռելսերից: Դա  
մանկական հոլն ե:

Դու յերկի շատ անգամ խաղացել  
ես այդ զվարճալի խաղը քո սենյակի  
հատակի վրա: Յեվ դու, իհարկե, նկա-  
տել ես, վոր այդ հոլը շատ համառ  
խաղալիք ե, — յերբ նա պտտավում ե,  
նրան շատ գժվար ե գլորել, վայր գցել,  
և նա հաստատապես վերադառնում ե  
իր նախկին դրությանը, վոր կողմից  
ել վոր դու աշխատես նրան վայր ձգել:  
Իսկ այժմ, յերբ դու մտաբերեցիր այդ  
զվարճալի խաղալիքը, յերեակայիր  
այսպիսի մի բան — վորքիկ վագոնը,  
միայն մի գծի վրա անիվ ունենալով,  
շարժվում ե մի ռելսով: Ի՞նչ ես կար-  
ծում, նա շուռ կզա, թե վոչ:

— Իհարկե, այս:

Բոլորովին ձիշտ ե: Սակայն յեթե  
այդ վագոնի մեջ տեղավորենք հոլ և  
ստիպենք նրան պտտավել շատ մեծ արա-  
գությամբ, ի՞նչ կլինի այն ժամանակ:

Բանից դուրս ե գալիս, վոր այն  
ժամանակ վագոնը կշարժվի մի ռելսով  
և նույնիսկ չի յել յերերա.  
Ինչու համար:

Հենց նրա համար, վոր հենց նա  
թեթև կերպով թեքվի կողքի վրա,  
կսկսի թեքել այն կողմը և իր հոլը,  
վորը համառ կերպով աշխատելով պահ-  
պանել իր նախկին դրությունը, կհա-  
վասարվի այդ թեքմանը և կուղղի  
վագոնի դրությունը:

Ահա տեսնում ես՝ մի ռելսով կա-  
րող ե կառավարվել յերկաթուղին, բա-  
վական ե միայն, վոր նա հիշե այդ  
զվարճալի փոքրիկ իրը:

Առաջին անգամ այդ միտքը հայտ-  
նըվեց 1902 թ., յերբ մի անգիտացի,  
վոմի Բրեննան, իսկ նրանից հետո գեր-  
մանացի Շերլը, ամեն մեկն իր միա-  
ռելս յերկաթուղին շինեցին. Բերլինի  
կենդանաբանական պարտիզում հիա-  
նալի կերպով մի ռելսի վրայով վագոն  
եր վոչ այնքան մեծ հոլով վագոնը և

հաջողությամբ տեղափոխում եր զար-  
մացած ճանապարհորդներին:

Ներկայումս արտասահմանում ար-  
դեն կան խոշոր հողամասեր միառելս  
ճանապարհներով, և, իհարկե, շուտով  
նա կտեղափոխվի նաև մեզ մոտ՝ Ռու-  
սաստան։ Համենայն դեպս, մի ժամա-  
նակ խոսում եյին նրա մասին, վոր  
նման ճանապարհ պիտի շինվի Գատ-  
չինայի և Լենինգրադի միջև։

Ահա թե ինչպիսի հետաքրքիր  
հարցեր դուք ապագայում ստիպված  
կլինեք լուծել յերկաթուղիների վերա-  
բերմամբ։

## 1000 ՎԵՐՍ ՄԻ ԺԱՄՈՒՄ.

Հիմա, յերբ դու տեղյակ ես միա-  
ռելս յերկաթուղուն, դու արդեն հան-  
գիստ սրտով կարող ես ասել, վոր յեր-  
կու ռելսերից մեկը, թերես, բոլորովին  
մեզ պետք չե.

Բայց նա վոչ միայն պետք չե,  
այլ նույնիսկ վնասակար ե, վորովինետե,

ինչպես պարզվեց գործնականից, միաւ-  
ռելս ճանապարհով կարելի յէ զարգա-  
ցնել շատ մեծ արագություն, քան մեր  
յերկուռելսանի ճանապարհով, կարելի  
յէ բարձրանալ խիստ զառիվերով և  
մինչույն ժամանակը կարելի յէ խնա-  
յել այն մետաղը և աշխատանքը, վոր  
գնում են այդ ափելորդ ռելաերի պատ-  
րաստության վրա:

Ուրեմն մի ռելսը մեզ պետք չե-  
բայց դուցե և վերջին ռելսից ել մենք  
կարող ենք հրաժարվել:

— Դեհ դա արդեն անկարելի յէ.—  
Վրդոված կասես դու:— Յեթե դեռ կա-  
րելի յէ համաձայնել, վոր գնացքը,  
շնորհիվ հոլի, պատփում ե, գնում և  
մի ռելսով, ապա, ուրեմն, ի՞նչ կերպ  
նա կարող ե առանց մի հենարանի  
իսկ կառավարվել:

Բայց բանից դուրս ե գալիս, վոր  
կարող ե:

Հիմա դու ստիպված պիտի լինես  
հիշելու մի այլ խաղալիք ել, վորի հետ

անպատճառ դու խաղացել ես.— դա  
մագնիսն ե, զիշում ես, ինչպես մե-  
խերը, մագնիսից ձգվելով, հանկարծ  
կարծես թե կորցնում են իրենց կշի-  
ուլ և բաժանվում են յերկրից, կըպ-  
չելով մագնիսին:

Յեվ ահա հենց այդ խաղալիքը  
վճռեցին գործադրել առանց ռելսերի  
նոր յերկաթուղի շինելու գործում:

Սակայն այստեղ դու պիտի հիշես  
ֆիզիկայից մի բան, վորովհետեւ առանց  
դրան հազիվ թե հասկանալի լինի քեզ  
մեր նոր յերկաթուղին:

Բանը սրանում ե: Յեթե ծռած  
յերկաթի կտորը փաթաթենք առան-  
ձնացած (այսինքն ծածկված աբրեշու-  
մե թելով) մետաղալարով և այդ մե-  
տաղալարի ծայրերը միացնենք մի վո-  
րկե ելեկտրականության աղբյուրի  
հետ, այն ժամանակ առաջ կգա շատ  
հետաքրքիր բան: Հենց վոր հոսանքն  
սկսի անցնել լարով, մեր հասարակ  
յերկաթի կտորը կդադարի արդեն հա-

սարակ յերկաթ լինելուց, այլ կդառնա  
մագնիս (կամ, ինչպես այդ դեպքում  
նրան անվանում են՝ «Ելեկտրոմագ-  
նիս»): Բայց բավական ե միայն դա-  
դարեցնել հոսանքը, և յերկաթը վայր-  
կենապես կզրկվի իր մագնիսային  
ուժից, վերածվելով նորից մեր հին,  
սովորական յերկաթի կտորին:

Սակայն այդ բոլորը չեն: Բանից  
դուրս ե գալիս, վոր հենց վոր հոսան-  
քը սկսում ե անցնել ելեկտրոմագնի-  
սի կծիկի միջով, այդ դեպքում նրա  
կողքին գտնված մետաղի կտորի մեջ  
առաջ են գալիս շատ զվարճալի բա-  
ներ: Այնտեղ հայտնվում են առանձին  
ելեկտրական ուժեր (նրանց գիտու-  
թյան մեջ անվանում են «Փուկոյի հո-  
սանքներ»), վորոնք աշխատում են հրել  
այդ կտորը ելեկտրոմագնիսից:

Այդ փուկոյի հոսանքների վրա  
մի պրոֆեսոր այսպիսի փորձ կատա-  
րեց: Ելեկտրոմագնիսի վրա նա դրեց  
մի ծանր ալյումինի ողակ: Հենց վոր

հոսանքը բաց թողվեց մագնիսի կծի-  
կի մեջ, ծանր ողակը վեր ցատկեց, —  
նրան թոցըին «Փուկոյի հոսանքները»:

Յեվ ահա բելգիացի Բելեն ոգտը-  
վեց այդ հատկությունից իր անոնց յերկաթուղու կաղապարն ստեղծելու  
համար, վագոնի հատակը նա շինեց  
ալյումինից, իսկ ճանապարհի ուղղու-  
թյամբ, միմյանցից մի վորոշ տարա-  
ծության վրա, տեղավորեց մի շարք  
ելեկտրոմագնիսներ:

Նրա հաշիվս ուղիղ դուրս յեկավ,  
և առաջին իսկ փորձի ժամանակ,  
լոնդոնի աչքի ընկնող մի խումբ ին-  
ժեներների ներկայությամբ, նրա 3  
փթանոց վագոնը մի ժամում մինչեւ  
500 վերստ անցավ, թեև վոչ մի կաս-  
կած չկար, վոր հեշտությամբ նրա ա-  
րագությունը կարելի յեր հացնել ժամը  
1000 վերստի: Յեվ, վոր ամենից հե-  
տաքրքրականն եր, այդ փոքրիկ վա-  
գոնը չեր շարժվում իր ճամպով և  
նույնիսկ չեր ել սահում նրա մակե-

բեռւյթով, այլ այդ ահազին արագութիւնը թուավանցավ ելեկտրոմագնիսների վրայով, բոլորովին նրանց չշըփվելով:

Բանն ինչումն եւ ուրեմն, և ինչ տեսակի շարժիչ ուժ եւ ունեցել այդ թոշող «անոելս գնացքը»:

### Ի՞ՆՉՊԵՍ Ե ԱՊԱ ՇԱՐԺՎՈՒՄ ԱՆ- ՌԵԼՍ ԳՆԱՑՔԸ.

Բանից դուրս եւ գալիս, վոր այստեղ վոչ մի շարժիչ ուժ չի յեղել. նույն ելեկտրոմագնիսները, վորոնք դրված են գծի ուղղությամբ, շարժման մեջ եյին դնում գնացքը:

Սակայն յեկեք հասկանանք, թե ինչպես եւ դա առաջ գալիս:

Այս կամ այն միջոցով սկզբում այդ գնացքին պետք եւ տալ վորեւ շարժողություն, այսինքն հրել նրան: Նույն վայրէյանին նրա կողքին գտնը ված մագնիսը դեպի իրեն կքաշե: Բայց հենց վոր վագոնը կմոտենա նրան,

նրա ծանր ալյումինի հատակում յերեվան կգան «Փուկոյի հոսանքները», վորոնք հրելով վագոնը մագնիսից, հնարավորություն չեն տալ նրանց շրփվել իրար: Յեվ ահա, այդ յերկու ուժերի ազդեցության տակ, այսինքն մագնիսի շարժող ուժի և վեր հրող «Փուկոյի հոսանքների» ուժի տակ, մեր վագոնիկն արագ կերպով կտանա առաջին ելեկտրոմագնիսի վրայով: Թվում ե թե մի վորոշ տարածության վրա թռչելով նրանից, նա պետք ե ընկներ հող վրա:

Սակայն բանն ել նրանումն ե, հենց վոր վագոնը դուրս ե գալիս առաջին մագնիսի ազդեցության շրջանից, նա կընկնի յերկրորդի ազդեցության շրջանը, վորը նույնպես կքաշի դեպի իրեն և կըրի դեպի վեր ու այդպես անվերջ, մինչ այն ժամանակ, յերբ վագոնը կամ կհասնի ճանապարհի ծայրին, կամ մինչեւ ելեկտրոմագնիսը մնող հոսանքի կտրվելը:

Առաջին փորձերի փայլուն հետեւ վանքներն անզլիական կառավարությանն ստիպեցին հատկացնել մի հուդաբաժին և փող տալ ավելի մեծ վագոնների վրա փորձեր կատարելու համար։ Սակայն այսպես թե այնպես, դուրս ե գալիս, վոր ուելսերը բոլորովին ել, կարծես թե, հարկավոր չեն։ Ահա թե ինչպիսի հետաքրքիր գնացքների կհանդիպեք դուք ձեր ապագա կյանքում։

---

### ՊՏՈՒՏԱԿԱՎՈՐ ՏՐԱՄՎԱՅ.

Սակայն դուք կհանդիպեք առավել հետաքրքիր բաների ցամաքային փոխադրության մեջ,

Մինչև այժմ մենք սովորել ենք այն բանին, վոր գնացքը շարժվում ե, իսկ ճանապարհն անշարժ ե։

Բանից դուրս ե գալիս, վոր կարող ե և հակառակը պատահել։ Դրա առաջին փորձն արված եր 1924 թ.,

ապրիլի 23-ին Լոնդոնի ահագին ցուցահամնդեսում։

Յերկակայիր յերկար, փողոցի յերկու կողը վոչ այնքան խոր կանավների միջով տարված մետաղյա յերկար ձող։ Չողի վրա ամրացված ե մի պտուտակ, իսկ նրա յերկու կողմը յերկրի մակերեսութի վրա տեղափորված են մի-մի սելս կամ, ավելի ճիշար, մի-մի մետաղե տախտակ, վորի վրայով կարող են պտուվել նոր արամվայի անիվները։

Մինչդեռ ինքը տրամվայը տարբերվում ե մեր սովորական տրամվայից նրանով, վոր նա նախ և առաջ չունի շարժիչ գործիք (МОТОР)։

Նրա տեղը վագոնի հատակում տեղափորված ե մի մեծ յերկաթե շրջանակ (гайка), վորի մեջ ազատ կերպով մտնում ե առանցքի վրայի պտուտակը։ Յեզ ահա, յերբ մենք սկսենք պտուել մեր առանցքը, ապա ուրեմն և նրա վրա գտնված պտուտակը, այդ դեպ-

բում վերջինը յերկաթե շրջանակի  
միջոցով կստիպի վագոնը շարժվել ա-  
ռանցքի շուրջը։ Ստացվում ե այդպի-  
սով նույն բանը, ինչ վոր կստանայինք,  
յեթե մենք ունենայինք անշարժ պառ-  
տակ և վոչ մի բանով չամրացված յեր-  
կաթե շրջանակ, այսինքն ուղիղ հա-  
կառակը նրան, վոր սովորաբար լի-  
նում ե։

ԶԵ վոր մեծ մասամբ կյանքում  
մենք ունենք անշարժ յերկաթե շրջա-  
նակ և նրա մեջ ենք պտտեցնում պտո-  
տակը։ Պտտեցնելով նրան, մենք միե-  
նույն ժամանակ ստիպում ենք նրան  
առաջ շարժվել։ Իսկ այստեղ հակառակն  
և ստացվում, — մենք պտտում ենք մեր  
անշարժ պտուտակը (առանցքը պտու-  
տակով) և առաջ ենք շարժում յերկա-  
թե շրջանակը (մեր յերկաթե շրջանա-  
կով վագոնը)։ Առանցքը շարժվում ե  
ելեկտրական շարժիչ ուժի միջոցով։

Այդ պտուտակալին տվամվայը վեր-

դացավ 5—40 վերստ անցնել մի ժա-  
մում և փոխադրել 15,833 մարդ։


### ՇԱՐԺՎՈՒՄ ՄԱՅԹԻ

Ցամաքային փոխադրության մեջ  
վերջին նորությունը, վորի մասին մենք  
կպատմենք այս գրքույկի մեջ, հայտ-  
նըվեց նորերս Ամերիկայում Նյու-Յորկի  
«42-րդ փողոցում»։

Յերեակայիր մեր մայթի տեղ չորս  
իրար հուալ միացած չորս առանձին-  
առանձին յերկար շերտեր։ Առաջին  
շերտը շարժվում է մի ժամում  $4\frac{1}{2}$   
վերստ արագությամբ, յերկրորդը՝ 9  
վերստ, յերրորդը՝  $13\frac{1}{2}$  վերստ, իսկ  
չորրորդն անշարժ է։

Յեվ ահա յերբ մենք ցանկանանք  
ոգավել այդ մայթից, անշարժ շերտից  
մենք անցնում ենք առաջին շարժվող  
շերտը։ Իսկ ցանկանալով ավելի արա-  
գացնել մեր շարժումը — առաջ անցնելը,  
հետզհետե անցնում ենք վերջին արագ

Հերտը, ուր հարմարության համար  
շինված են նստարաններ։  
Մոտենալով կայանին՝ ամբողջ այդ



գործողությունը կատարում են հակա-  
ռակ դասավորությամբ։ Մեկ շերտից  
գեպի մյուսն անցումը վոչ մի դժվա-

րություն չի ներկայացնում, և նույն-  
իսկ աննկատելի յեւ։

Շարժվում եր այդ շարժվող մայթը  
բավական բարդ ելեկտրական մեքե-  
նական կազմով, վորի մասին մենք  
այստեղ չենք խոսիլ։ Այդպիսի մայթի  
միջոցով կարելի յեւ մի ժամում փոխա-  
դրել 35,640 մարդ։

Ահա վորքան հետաքրքրական բան  
դու կիմանաս, յերբ մեծանաս և ինքդ  
սկսես կառուցել նոր ցամաքային հե-  
տաքրքիր փոխազրության միջոցներ,  
վորի շարքում կլինեն այնքան «հրաշք-  
ներ», վոր ծերունի-շոգեկառը նրանց  
շարքում տեղ չի ունենա։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

Եջ.

1. Ներածություն . . . . .	3
2. Հին ժամանակների ավտոմոբիլները	9
3. Մեր շոգեկառքի նախահայրերը .	13
4. «Հրթիռի» ճնունդը . . . . .	16
5. «Դիվական հնարք» . . . . .	23
6. Ինչպես և աշխատում շոգեկառքը .	25
7. Ամերիկական գեր-շոգեկառքը .	28
8. Շոգեկառքը մեռնում ե . . . . .	33
9. Շրջամուղ կառք . . . . .	35
10. Զերմաքարշ . . . . .	40
11. Ելեկտրոգնացք . . . . .	42
12. Ավտոմոբիլ . . . . .	46
13. Թրթուրով Սահարայի միջուկ .	49
14. Միառելս յերկաթուղի . . . . .	52
15. 1000 վերստ մի ժամում . . . . .	57
16. Ի՞նչպես և ապա շարժվում անռելս գնացքը	62
17. Պտուտակավոր տրամվայ . . .	64
18. Շարժվող մայթ . . . . .	67



ՀՀ Ազգային գրադարան



NL0261715

16350

